

Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանի

Ողջույնի խոսքը

**«Փոխադարձ վստահություն, միասնականություն եւ պատասխանատվություն»
խորագրով Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովի ժամանակ**

/ք. Երեւան, 18 սեպտեմբերի 2017թ., ժ. 10:30/

Հայաստանի Հանրապետության մեծարգո՝

Նախագահ,

Ձե՛րդ Սրբություն Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Ծայրագույն Պատրիարք
Գարեգին Երկրորդ,

Ձե՛րդ Սրբություն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Առաջին,

Հարգելի՛ ներկաներ,

Տիկնա՛յք եւ պարոնա՛յք,

Թույլ տվեք ջերմորեն ողջունել ձեզ՝ «Փոխադարձ վստահություն, միասնականություն եւ պատասխանատվություն» խորագրով Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովի բոլոր մասնակիցներին:

Բարձր մակարդակով կազմակերպված այս միջոցառումը կարելու է ու պահանջված է՛լ Մայր Հայաստանի, է՛լ Սփյուռքի, է՛լ Արցախի համար:

Ակնհայտ է, որ Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը հայոց անկախ պետականության գոյության, նրա բնականոն զարգացման ու զորացման,

սփյուռքում ազգային ինքնության պահպանման եւ նրա կենսունակության ապահովման կարևորագույն գրավականն է:

Խնդիրները, որոնք ընդգրկված են համաժողովի օրակարգում, ունեն ռազմավարական նշանակություն մեր պետականության շարունակական զարգացման հեռանկարների նախանշման տեսանկյունից:

Դրանց համակողմանի քննարկումը,

ապագա անելիքների ճշգրտումն ու հստակեցումը պահանջում են համակարգված աշխատանք, իրատեսական ու հավակնոտ ծրագրերի մշակում եւ իրականացում, առկա ներուժի արդյունավետ օգտագործում: Եվ անհրաժեշտ է ընդունել այնպիսի որոշումներ, որոնք, հաշվի առնելով ազգային շահերը եւ ժամանակի մարտահրավերները, կնախանշեն մեր հաստատուն առաջընթացը:

Մենք ունենք նման համատեղ աշխատանքների շնորհիվ արձանագրված նշանակալի հաղթանակներ ու ձեռքբերումներ, որոնց շարքում առանձնանում են

Հայոց ցեղասպանության եւ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից եւ այլ խողովակներով իրականացված բազմաթիվ ծրագրեր:

Կարելուք է նաեւ, որ համաժողովի աշխատանքներին մասնակցում են հայտնի պետական, քաղաքական ու հասարակական գործիչներ, գիտնականներ, վերլուծաբաններ, բարերարներ, տարբեր ոլորտների ներկայացուցիչներ աշխարհի շատ երկրներից:

Մեան ներկայացուցչական բազմազգ կազմը նաեւ հանդիսանում է տարբեր ժողովուրդների եւ պետությունների հետ երկխոսության հաստատման ու ամրապնդման, բարեկամական կապերի զարգացման հարմար հարթակ:

Հայ ժողովուրդն ունի լավ բարեկամներ աշխարհով մեկ, եւ մենք բարձր ենք գնահատում նրանց անկեղծ, անշահախնդիր ընկերությունը՝ այն համարելով մեծ եւ մնայուն հարստություն:

Նրանցից ոմանք այսօր այստեղ են, եւ ես ուզում եմ մեկ անգամ եւս ողջունել բոլորին:

Հարգելի՛ ներկաներ,

Համոզված եմ, որ համաժողովը հաջողությամբ կիրականացնի իր աշխատանքները եւ արժանի ներդրում կունենա համազգային խնդիրների լուծման գործում:

Բոլորիդ մաղթում եմ խաղաղություն, քաջառողջություն,

մեծագույն հաջողություններ ու ամենայն բարիք:

Շնորհակալություն: